

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԸ

Բաճասիր. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

1830-ական թթ. Վիեննայի Մխիթարյան մի խումբ՝ սաներ՝ Հովսեփ Գաթրըճյան, Մաղաթիա Գարագաշյան, Ղևոնդ Հովնանյան և այլք, ուսումնասիրելով V դարի առաջին կեսի հայ գրական լեզուն, եկան այն եզրակացության, որ հիշյալ դարակեսի գրական լեզուն մի շարք լեզվաոճական հատկանիշներով զանազանվում է երկրորդ դարակեսում, և հատկապես 60-ական թթ. սկզբից գրի առնված գրական լեզվից։ Այս զանազանությունները որոշելուց, խմբավորելուց հետո V դարի առաջին կեսի գրական լեզուն անվանեցին ռսկեդարյան, իսկ դրանից ավելի ուշ դրված կամ թարգմանված գրական երկերի լեզուն կոչեցին հետադարյան։

Վենետիկի Մխիթարյանները և նրանց հետևողությամբ կամ ինքնուրույնորեն այլ հայագետներ ու բանասերներ մերժեցին այդպիսի բաժանումը, մանավանդ որ դեռևս իշխում էր այն կարծիքը, թե գրաբարը պետք է դառնա համազգային գրական լեզու, իսկ հայոց գրական լեզվի այդպիսի բաժանումը կառաջացնի բառասով, եթե մենք այլևս չկիրառենք այն բառերը, որոնք կազմված են V դարի առաջին կեսից հետո։ Լեզվի շրջանաբաժանման վիեննացի հեղինակները գտնում էին, որ V դարի առաջին կեսի դրականությունից դուրս չկա այնպիսի գրականություն, որի գրական լեզուն օրինակելի լինի։ Վենետիկի Մխիթարյանները, որոնց տեսակետները ձևակերպում էր Արսեն Բագրատունին, արդարորեն այդպիսի քայլը համարում էին խտրականություն։ Հայ գրականության նկատմամբ, որի հետևանքը իսկապես կլինեի հայ գրական լեզվի աղքատացումը։ Բագրատունին մատնաշարում էր այն ինքնուրույն ու թարգմանական գրքերը, որոնց լեզուն օրինակ էր առաջի գրական լեզվի հետագա զարգացման համար։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Բագրատունին ճշտորեն ցույց էր տալիս այն գրքերը, որոնց լեզուն օրինակելի կարելի էր համարել։ Նա V—XIII դդ. ամբողջ գրականությունը երեք դասի էր բաժանում։ Առաջին դասի մեջ դնում էր այն գրքերը, որոնք գրված են ընդհանուր հայկական ոճով։ Իրանք են՝ Աստվածաշունչը, Ժամագիրքը, Պատարագամատուցը, Մաշտոցը, Շարականները։ Սրանք բուն ազգային լեզվի օրինակներ են՝ ազգային լեզուն ու ոճը ճանաչելու և ընտրելու համար։

Մյուս հեղինակներից սրանց մոտենում են Ագաթանգեղոսը, Բուզանդը, Ծղնիկը, Ծղիշեն, Մանդակունին, Փարպեցին, Խորենացին, Ռսկեբերանը, Բարսեղ Կեսարացին («Վեցօրեայքում»), Սեբերիանոսը, Կյուրեղ Երուսաղեմացին, Շիրակացին, Արշարունին, Խոսրովը, Լաստիվերցին, Շնորհալին, Մխիթար Գոշը, Իգնատիոսը, որ ժամանակի էլ սրանք պատկանեն, որովհետև սրանց լեզուն նույնպես ազգային ոճի կնիքն ունի։

Երկրորդ դասի մատենագիրներից են Խորենացին («Պատմության» Ա գրքի, «Ճառերի», «Պիտոյից գրքի» մեջ), Օձնեցին, Հովհ. Կաթողիկոսը,

Արծրունին, նարեկացին, Մազիստրոսը և այլն, որոնցից ընտրանքով շատ բան կարելի է վերցնել:

Երրորդ դասի հեղինակներն են Եվսեբիոսը («Եկեղեցական պատմություն»), Հակոբ Զգոնը, Եփրեմը: Բագրատունին զգուշացնում էր հունաբան դպրոցի հեղինակներից և գտնում էր, որ հայացի բառերն ու ոճերը չէին կարող միայն V դարի առաջին կեսով սպառվել. հայերեն բառերն ու ոճերը սփռված են նաև հետագա շրջանի գրքերում, և մենք չպետք է խորշենք դրանցից: Մեր լեզուն չի կարող զարգանալ ու կատարելագործվել առանց այդ լայն և ուղիղ ճանապարհն ընտրելու: Այս տեսակետից Բագրատունին միանգամայն արդարացի էր:

Արդարացի էին նաև Վիեննայի Մխիթարյանները, որոնք լեզվական զանազանություններ էին նկատում հայ գրականության առաջին կեսդարյա գրողների լեզվի և հետագա գրողների լեզվի միջև: Սակայն պետք է նշենք, որ նրանք այդ զանազանությունները հիմնում էին միայն մի կարճ ժամանակի գործոնի վրա, որը լեզվական բաժանման համար շատ սուղ ժամանակ էր և չէր կարող այնպիսի անջրպետ ստեղծել երկու շրջանի լեզուն զանազանելու համար, որպիսին նրանք մասամբ արհեստականորեն դրեցին:

Եթե առաջին եզրը ընդգրկում է մի 50 տարվա ժամանակաշրջան, ապա երկրորդ եզրը՝ հետոսկեդարյանը, ամբողջ հազարամյակի մի շրջան է պարփակում: Այդպիսի հակադրությունը մեթոդաբանորեն ու գիտականորեն կուպիտ սխալ է:

Այսընյանը, որ Վիեննայի Մխիթարյաններից է և կողմնակից ոսկեդարյանի և հետոսկեդարյանի բաժանման, լեզվական առումով ավելի մոտ է համարում Բուզանդին ու Փարպեցուն, որոնք իրարից 70—80 տարով հեռու են, բան Աղաթանգեղոսին ու Կորյունին, որոնց լեզվի մասնակի համեմատության հիման վրա նորայր Բյուզանդացին եկել է այն եզրակացության, որ իբրև Աղաթանգեղոսի և Բուզանդի գրքերը հունարենից Կորյունն է թարգմանել:

Վիեննայի Մխիթարյանների նկատած լեզվական զանազանությունները Աճառյանը ընդհանրացնելով՝ ամփոփում է հետևյալ կետերի մեջ:

1) Մեսրոպյան հայերենը (այսինքն՝ վիեննացիների հորջորջած ոսկեդարյան հայերենը) չգիտե մի խումբ բառեր, որոնք սովորական են հետին հայերենի մեջ. ինչպես՝ վաբրամ, վսեմ, վեհ, աբիի, բառ, բայ, սեռ, տառ, կենցաղ, սաղարբ, հրաշք, փեթակ, տեսակ, քանակ, որակ, էսկ, տոփանք, տրոհել, հրնուիլ, գեղջուկ, վաղեմի և այլն:

2) Մի խումբ բառեր մեսրոպյան հայերենում ձևով փոքր-ինչ տարբեր են, ինչպես՝ արծուի, հիսիսի, պատասխանի, արուեստ. փոխանակ՝ արծիս, հիսիս, պատասխան. արհեստ, որոնք հետին են:

3) Ապա, առ, բաղ, բազ, գեռ, դեռ, հոմ, մակ, յառ, նեռ, շաղ, շառ, պառ, վալռ, վեռ, տառ, տրամ, ստոր, փաղ մասնիկներով սկսվող բառերը չեն գտնվում մեսրոպյան հայերենի մեջ:

4) Ամեն բառը մեսրոպյան հայերենում կարող է բարդվել միայն բայ-արմատի և ոչ թե ածականների հետ:

5) -ուի մասնիկով իզական բառեր չեն գործածվում:

6) -զան մասնիկը... բնավ չի գործածվում:

7) -նեմ մասնիկը... իսկառ անգործածական է:

8) -ային մասնիկը գործածվում է միայն տեղ ցույց տվող բառերի հետ:

9) Ահ- մասնիկով կազմված բացասական բառեր չեն կարող իրենց վերջում կրել -եւ մասնիկը:

10) ող և եալ ձևերով դերբայները շատ սովորական չեն մեսրոպյան հայերենում:

11) -իլ-ով անորոշ դերբայ չկա:

12) Մեսրոպյան հայերենը սիրում է բաղաձայնություններ կիրառել:

13) Մեսրոպյան հայերենում խառն բառը բարդության սկզբում ունի անարդական նշանակություն, իսկ բարդության վերջում՝ իր սովորական իմաստը:

14) Մեսրոպյան հայերենում որոշ բառեր ձևով դանաղանվում են. ինչպես՝ սառամանիք-սառնամանիք:

15) Մեսրոպյան հայերենը պարզ բայերի փոխարեն կիրառում է հարադիր բայեր, աղօրս առնել և ոչ թե աղօթել, երկիր պագանել և ոչ թե երկրպագել:

16) -տրեմ վերջավորությամբ բայեր և -տրուքիւն կազմությամբ գոյականներ Մեսրոպյան հայերենում չեն գտնվում:

17) Ահ բացասական մասնիկի փոխարեն շատ անգամ գտնում ենք առաւց կապը:

18) Ասվում է աշխարհ Հայոց, աշխարհ Պաղեստինացուց և այլն, փոխանակ՝ պարզապես Հայաստան, Պաղեստին և այլն:

Մինչև այս 18 կետերը մի առ մի քննելը, ավելացնենք, որ Վիեննայի երիտասարդ միաբանները այն ժամանակվա (XIX դարի 30-ական թթ.) հայ բանասիրության ոչ բարձր մակարդակի պայմաններում և երիտասարդական ոգևորության մշուշում մի քանի դիտողությունների հիման վրա շտապել են ձգրակացություններ անել, որոնք հանգեցրել են սխալների: Բացի դրանից, այս առասնով կետերի մեջ կան փաստեր, որոնք եզակի մի հեղինակի կամ մի զրքի են վերաբերում: Մինչդեռ ընդհանրացվել են իբրև ամբողջ կեսդարյան գրական լեզվի հատկանիշ: Զափազանցվել են ժամանակի և սերնդափոխության գործոնները՝ մոռանալով, որ Մեսրոպի և Սահակի աշակերտները ուսուցիչներից ուսածներն են փոխանցել իրենց աշակերտներին, և մի սերնդի ապրած ժամանակը քիչ է լեզվական այդպիսի գիրդ բաժանման համար: Այս էր աշատձառը, որ երբ հետագայում պարզվեց, թե այդ 18 հատկանիշները սահմանումներին ճշտվել չեն համապատասխանում, փոխանակ սահմանումները վերանայելու և ճշտելու, ավանդույթի և աստվածացման մոլեռանդ մի խանդով ոսկեդարյան հայերենի «գյուտի» կողմնակիցները սկսեցին պատմական փաստերի հետ դարմանալի մի խաղարկություն, որը և կոչեցին «սրբագրություն»:

Այժմ քննենք բերված 18 կետերը և տեսնենք, թե դրանք որքանով են համապատասխանում սահմանումներին:

1-ին կետում ասված է, թե մեսրոպյան հայերենը չգիտե մի շարք բառեր, որոնք սովորական են հետմեսրոպյան հայերենի համար: Այդ բառերից մեկում են առվաճաճ, առոհել, հրաշխ և այլն (տե՛ս վերը): Ազաթանգեղոսը՝ և

¹ Սեդակյան Գեղամ Պատմություն Հայոց, Տփղիս, 1909:

Բուդանդր² տովանֆ, տովիմ, տովող բառերը կիրառել են մի քանի անգամ, որ չեն կարող ոչ մի սրբադրության ենթարկվել:

«Եւ իբրև ետես թագաւորն զգեղապանծ վայելչութիւն պատկերակերպ նկարադրին Հռիփսիմեայ, մուկնական ցանկութեամբ տովողաց... ժամ տուեալ հարսանեաց ճեպով տազնապաւ շտապէր դուրախութիւնս կատարել» (Ագաթանգեղոս, 140): «Ապա առ համբաւ ցանկութեան նուանն տովեալ լինէր մի ևս հօրեղբորորդին Գնելոյ» (Բուդանգ, Դ, 15): «Տիրիթն սկսանէր ժոյժ շունելոյ տովանացն» (նույն տեղում): «Ակսան նուագել զիրան տովանացն Տիրիթայ» (նույն տեղում):

Կորյունը³ ունի կենցաղ բառը («Ջաշխարհական կենցաղոյս զհանգամանս ցուցանէին», էջ 28):

Վիեննայի Մխիթարյանների ուշադրությունից վրիպել է շատ գործածական և քիչ գործածական բառապաշարի պարագան, որ լեզվի ամբողջ պատմության ընթացքում ուղեկցում է նրան: Այժմ տեսնենք հիշյալ բառերը որքան հաճախ են կիրառվում հորենացու⁴, Փարպեցու⁵ և Եղիշեի⁶ երկերում, որոնք ոսկեդարյան չեն համարվում, և որոնց երկերում իբր սովորական են այդ բառերը: Խորենացին չունի փարբամ (ունի միայն փարթամացուցիչ մեկ անգամ), վսեմ (կա վսեմափայլ մեկ անգամ), սեռ, հրաշֆ, փեթակ, տեսակ, ֆանակ, որակ, էակ, տովանֆ (կա տովական-տովացեալ), հրօռիլ: Եղիշեն չունի փարբամ, վսեմ, տովանֆ, տրոհել, հրհուիլ, արփի, բառ, բայ, սեռ, տառ, կենցաղ (կա միայն կենցաղասէր), սաղարբ, հրաշֆ (կա հրաշակերտ), փեթակ, ֆանակ, որակ, էակ: Փարպեցին չունի փարբամ, վսեմ, արփի, բառ, բայ, էակ, սաղարբ, հրաշֆ (կա մեկ անգամ հրաշալի), փեթակ, ֆանակ, որակ, տովանֆ, տրոհել, հրհուիլ, վեհ:

Հիշյալ բառերից Եղիշեն կիրառել է ընդամենը 2 բառ՝ վեհ (4 անգամ), տեսակ (1 անգամ): Փարպեցին ունի 4 բառ՝ սեռ (1 անգամ), տառ (2 անգամ), կենցաղ (1 անգամ), տեսակ (2 անգամ): Հիշյալ ցանկի բառերից համեմատաբար շատ է կիրառել Խորենացին՝ վեհ, արփի, բառ, բայ, տառ, կենցաղ, սաղարբ, տրոհել, որոնցից միայն կենցաղ՝ 7 անգամ, բառ և սաղարթ՝ 2 անգամ, իսկ մնացածը՝ մեկական անգամ:

Բայ բառը շատ հին բառ է և կիրառված է բազմաթիվ անգամ Աստվածաշնչում և մեսրոպյան այլ գրքերում միայն ասում է նշանակությամբ: Իսկ Խորենացին կիրառել է իոսոֆ իմաստով, ինչպես որ բան (-ասում են) ունի նաև խոսք նշանակությունը:

Ինչ վերաբերում է այդ բառերից կապված բարդություններին, ինչպես հրաշակերտութիւն, հրաշալի, վսեմացեալ և այլն, ապա այդպիսի բարդություններ կիրառված են նաև մեսրոպյան շրջանի գրքերում. համեմատիր «Ուրեմն ոչ ընդունիցի ունկն իմ հրաշակերտս ի նմանի» (Յովբ., Դ, 12):

Ինչպես տեսնում ենք, այդ բառերից ոմանք այնուամենայնիվ հատուկ են դառնում են մեսրոպյան հայերենում, բայց և նույնքան հատուկ են ևս Խորենացու, Փարպեցու և Եղիշեի գրքերում (Եղիշեի «Վարդանանց պա-

² «Փառաստոսի Բուդանդանոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1839:

³ Կ ո Ր Ի Ն, Վարր Մաշտոցի, Երևան, 1941:

⁴ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տփլիս, 1913:

⁵ «Ղազարի Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք», Տփլիս, 1904:

⁶ «Եղիշի վարդապետի Մատենագրութիւնը», Վենետիկ, 1859:

տերազմում» ընդամենը 2 բառ): Այս նշանակում է, որ հայոց լեզվի բառապաշարում հիշյալ բառերը կամ քիչ են գործածվել, և կամ գրականությունը առիթ չի ընծայել դրանց կիրառության համար: Օրինակ. վերցնենք փեթակ բառի համանիշ մեղուանոցը, որ համարվում է մեծորսական: Քանի՞ անգամ է կիրառվում մեծորսական գրականություն մեջ. հայտնի է միայն Եզնիկի⁷ կիրառությունը. «Ազդ լիցի նոցա որպէս... մեղուաց զգորս մեղուանոցացն յառաջ քան զցորտն ականամոմով խնլոյ» (էջ 175): Սա է. «Հայկազեան բառարանի» միակ հին օրինակը. մնացած վկայությունները (4 օրինակ) հետմեծորսական են: Մի վկայություն էլ ունի Աստվածաշունչը, որտեղ մեղուանոց չի նշանակում փեթակ, այլ մեղուներով կամ փեթակներով առատ վայր. «Եւ եմուտ զօրն ի մեղուանոցն» (Ա., Թագաւորութեանց, ԺԴ, 26): Այսպիսի պատահական կիրառությունները չի կարելի հիմք ընդունել գրական լեզվի պատմության շրջանաբաժանման համար: Շատ հնարավոր է (և այդ այդպես է), որ Եզնիկի մայրենի խոսվածքում փեթակ բառի փոխարեն գործածվել է մեղուանոց, և դա չի նշանակում, թե մյուս խոսվածքներում փեթակ չի եղել և հանկարծ լույս աշխարհ եկավ հետմեծորսական գրականության մեջ: Մեղուանոց բառը կարող էր քաժանման հիմք ծառայել, երբ մի կամ երկու տառնյակ անգամ կիրառվեր և այն էլ մի շարք հեղինակների կողմից:

Իսկ խորենացին, Փարպեցին, Եղիշեն մեղուանոց բառը նույնպես չեն գործածել, որովհետև այդ բառի կիրառության համար պատահություն չի եղել:

2-րդ կետում ասված է, որ մեծորսական հայերենի մի խումբ բառեր տարբեր են հետմեծորսականից. այդ բառերն են՝ աբծուի, հիւսիսի, պատասխանի և այլն: խորենացին աբծուի բառը կիրառել է 7 անգամ, Փարպեցին՝ 4 անգամ և ոչ մեկը աբծիւ ձևը չունի (Եղիշեն այդ բառը չի գործածել): խորենացին հիւսիսի բառը ունի 14 տեղում, Եղիշեն՝ 2 տեղում, Փարպեցին՝ 1 և ոչ մեկը չունի հիւսիս ձևը. մի տեղում Եղիշեն ունի հիւսիս, այն էլ տարբերակներ է մեջ հիւսիսի է: Պատասխանի բառը խորենացին կիրառել է 12 անգամ, Փարպեցին՝ 48 անգամ, Եղիշեն՝ բազմաթիվ անգամ, որոնք ոչ մի տեղում չունեն պատասխան ձևը: Այդպես է դրությունը տեղի բառի նկատմամբ, որ կիրառված է հարյուրավոր անգամ, հիշյալ հեղինակներից Փարպեցին, որ 100 անգամից ավելի է կիրառել, միայն երեք անգամ ունի տեղօք, որ կասկածելի է, պետք է եղած լինեին տեղեւոք-տեղեւոք: Արուեստ բառը երեք հեղինակն էլ մի շարք անգամներ կիրառել են, և ոչ մի տեղում աբհեստ բառի հետքը չկա:

4-րդ կետում ասված է, որ մեծորսական հայերենում ամեն բառը ածականի հետ չի բարդվում, այլ միայն բայարմատի հետ. ամենակեցոյց, ամենազէտ, ամենահնար և այլն: Այժմ քննենք այս կետը և տեսնենք, թե դա որքանով է համապատասխանում կանոնին: Ազաթանգեղոսը գրում է. «Զի հնազանդեացին ընդ ամենահնչտ լծով քով»: «Հրաման տայր... հնազանդ լինել ամենահնչտ լծոյն Քրիստոսի» (Կորյուն, 72: Տե՛ս նաև «Յաճախապատում», 209. Վենետիկ, 1838): «Հտպիտս և ընչապտուկս և ամենաշար ուսուցանեն» (Եզնիկ, 69): «Ամենարուեստ իմաստունն» (Եզնիկ, 75): «Ամենասուրբ երյորդութիւն» («Յաճախապատում», 209): Ամենագօր ունեն Ազաթանգեղոսը.

⁷ «Եզնիկայ Կողբացու. Եզնի տղանդոց», Վենետիկ. 1826:

Մակարայեցիները, Կորյունը՝ Վերջինս գործածել է նաև ամենապայծառ (ամենապայծառ հաւատ), ամենաբարի և այլն։ Խորենացին գործածել է միայն ամենահաբուստ, որ նշանակում է ամեն ինչով հարուստ (և ոչ թե ամենից հարուստ), ամենապատիկ (բաղմապատիկ), ամենասուրբ (ամեն ինչով սուրբ), ամենազան (տեսակ-տեսակ), ամենախմաստ (բազում իմաստություն ու հանձար արտահայտող)։ Սրանցից ոչ մեկն էլ բաղդատական աստիճանի նշանակություն չունի։ Խորենացին ամեն-ով կազմված Տ բառ է միայն գործածել (ևս ամենախնամ, ամենատես, ամենիմաստ)։

Եղիշեն ամեն-ով կազմված հինգ բառ ունի, որից ամենազոր, ամենասուրբ մեսրոպյան շրջանից են գալիս, ամենավաստակ (ամեն ինչով վաստակած) ինքն է կազմել, ամենիմաստ (ունի նաև «Յաճախապատումը») և ամենալալը, որոնցից ոչ մեկն էլ բաղդատական կամ գերադրական աստիճանի իմաստ չունի։

Ինչպես երևում է, ամեն-ով կազմված բառերը ավելի ժողովրդական են եղել, քան զրական։ Փարպեցին ունի 27 այդպիսի բառ, որոնցից ածականի և գոյականի հետ բարդվածներ են ամենազոր, ամենալալ, ամենալի, ամենալից, ամենալուրիւն, ամենախտալից, ամենահեշտ, ամենահղօր, ամենասուրբ, ամենատեղի։ Մնացածները բարդված են բայարմատների հետ։

Կորյունը կազմել է 12 այդպիսի բառ, որոնցից ածականային և գոյականական բարդություններ են ամենաբարի, ամենազոր, ամենահեշտ, ամենաշնորհող, ամենապայծառ, ամենապարզեղող, ամենաանե, ամենափրկիչ։

Ի՞նչ նույնիսկ ամենաշնորհող, ամենապարզեղող, ամենափրկիչ բառերը հանենք, վերջին բաղդարիչները համարելով բայեր, դարձյալ 5 բառ մնում է ածականային բարդությամբ, որ տոկոսային հարաբերությամբ գերազանցում է Փարպեցուն։

Այս նշանակում է, թե իբրև լեզվաբանական բաժանման հատկանիշ այս կետը ևս չի արդարացնում իրեն։ Ամեն բառը որքան որ ածականների հետ սակավ է բարդված ոսկեդարյան զրականության մեջ, նույնքան էլ քիչ է խորենացու, Եղիշեի և Փարպեցու զրվածքներում, իսկ այդ հեղինակների գործերը իրենց լեզվական հատկանիշներով մեկուսացվել են իբրև ոչ դասական լեզվով զրված երկեր։

5-րդ կետում ասված է, որ մեսրոպյան հայերենում ունի մասնիկով բառեր չեն գործածվում։ Որոշ երգոցի՝ նույնպես թարգմանության մեջ կարգում ենք. «Վաթսուն են քաղունիս և ութսուն հարճ» (Ձ, 7)։ «Տեսին զնա զստերը և երանեցին նմա քաղունիս» (Ձ, 8)։ Նորայր Բյուզանդացու վկայությամբ քաղունի բառը գործածված է Լարուրնա Եղեսացու թարգմանության մեջ երեք անգամ, Ջզոնի զրբում կա Բանաստուծի, Բզնատոսի թղթերում գտնվում են Երանունի, Իմաստունի, Բավատունի⁸, Բուզանդր ունի Համազասպունի, «Իսկ Վահանայ էր քոյրաթիւ Համազասպունի» (Դ, 59)։ «Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպի, զքոյր նորին Համազասպունի անուն ունէր կին... Ապա տարան զՀամազասպունի երկիրն Տոսպաց՝ ի քաղաքն Վան» (Բուզանդ, Կ, 37)։

⁸ Տե՛ս ն. Բյուզանդացի. Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք. Տփղիս, 1900, էջ 4—6։

Վիեննայի Մխիթարյանները, համաձայն նախապես սահմանված կանոնի, սկսեցին սրբագրել –ուհի–ով կազմված բառերը, իսկ ինչպե՞ս կսրբագրվի Համազասպունի, երբ երեք անգամ կիրառված է, մի տեղում էլ հրատարակիչները գրել են. «Յամենայն օրինակս և Համազասպունի»: Իսկ մեսրոպյան հայերենից մեկուսացված հորենացին, Փարպեցին, Եղիշեն քանի՞ անգամ են –ուհի–ով կազմված բառ կիրառել. վերջին երկուսը՝ ոչ մեկ անգամ, իսկ առաջինն ունի առաքելուհի, երիտասարդուհի, աստուածուհի, վարդապետուհի, Սմբատուհի, Զարուհի, Տիգրանուհի. Վերջին երկու անունները եղել են Տիգրան Հայկազնի կնոջ ու քրոջ անունները մեր թվարկությունից մի հարյուրամյակ առաջ: Շատ զարմանալի կլիներ, որ իրանական ծագում ունեցող այդ ածանցով բառեր չճշգրտվեին հայերենում, երբ մեր հին լեզուն այնքան խճողված է իրանական բառերով: Եթե զրականության մեջ քիչ է պատահում, ապա պետք է բացատրել երկու պատճառով. մեկ որ առիթ չի ներկայացել և մեկ էլ շատ հնարավոր է, որ քրիստոնեության շրջանում այդ ածանցով կազմված բառերը հեթանոսական զրադաշտական խորթ տպավորության արտահայտչություն են ունեցել:

6-րդ կետում ասված է, թե –զան մասնիկը բնավ չի գործածվում մեսրոպյան հայերենում, մինչդեռ հետինների մոտ սովորական է: Մեսրոպյան հայերենում կա միայն զանազան, որ չի նշանակում տեսակ–տեսակ, պես–պես:

Ազաթանգեղոսը գրում է. «Իսկ են բազումք, որ զիւրեանց առատութիւն եղեալ՝ աշխարհի օգուտ գործեն, զարդարեալ զթագաւորս ի զիւտ ծանրագին մարդարտին և զանազան ակամբք պատուականօք և կերպասու երանգ գունոյն» (4): Զանազան բառը, որ ըստ մեսրոպյան հայերենի առանձնահատկության պետք է նշանակեր աննման, զեղեցիկ և ոչ թե պես–պես, տեսակ–տեսակ, հենց Ազաթանգեղոսի այս հատվածում նշանակում է իսկապես տեսակ–տեսակ, պես–պես: Զաւմանազան բառը գործածվում է Ա Եզր Ա, 10⁹: «Նոր բաղդիրք հայկազեան լեզուի» բառարանը մեսրոպյան շրջանի գրքերից օրինակներ է բերում նաև Հրաչագան, սրբագան, աստուածագան, որոնց մասին, սակայն, առանց որևէ պատճառաբանության Նորայր Բյուզանդացին գրում է. «Անվավեր են հրաչագան և սրբագան, զորս կը հիշեն Նոր հայկդյնակերերանի մեկնութենէն Եսայեայ... երկրաշական թվի և աստուածագան (Սերեր., ԺԱ, 199)»⁹: Իրական փաստի վրա այս կասկածամտանքը գալիս է ավանդույթի դարձած սահմանումից, որ կաշկանդում է մինչև իսկ փաստերի սիրահար այնպիսի մեկին, որպիսին Ն. Բյուզանդացին էր:

Զան մասնիկով կազմված բառ Եղիշեն ոչ մի հատ չունի: Փարպեցին գործածել է միայն բազմազան, զանազան, հորենացու «Հայոց պատմության» մեջ գտնում ենք ամենազան, բազմազան, զանազան: Ինչպես ցույց են տալիս փաստերը, այս ածանցը V դարում արդյունավետ ածանց չի եղել: Այս կետը ևս բաժանման որոշակի սահման չի դրում:

Այդպիսի թույլ փաստ է նաև –նեմ մասնիկի հանդամանքը, որ նշված է Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ հիշատակված 7-րդ կետում: Ըստ այս կետի –նեմ մասնիկը հետին հայերենի սիրելի մասնիկներից մեկն է, բայց մեր հետին երեք հեղինակներից միայն հորենացին է այդ մասնիկով

⁹ Տե՛ս «Նոր բաղդիրք հայկազեան լեզուի»:

¹⁰ Տե՛ս Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 221:

բառ կաղմել արեգնանեմ, իսկ Փարպեցուն և Եղիշեին անծանոթ է հիշյալ ածանցը:

Ց-րդ կետում ասված է, որ -ային ածանցը մեսրոպյան հայերենում միայն տեղ արտահայտող բառերի հետ է բարդվում. օրինակ՝ «կարելի է ասել լեռնային, դաշտային... բայց կարելի չէ ասել երկնային, աստուածային, մարդկային, հրեշտակային, որոնք հետին ձևեր են»¹¹:

Հակառակի նման հենց մարդկային բառը Ազաթանգեղոսը կիրառել է 4 անգամ, ունի նաև տոհմային (իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն, էջ 17): «Դու ևս, որ իջուցեր զծառայն քո ղՅովնան յանդունդս խորոց ծովուն և ևտուր առնուլ զչափ քոյոյ զօրութեանդ և արտաքսեցեր զնա ի դուրս քան զմարդկային բնութիւնս (էջ 98): Նաև ըստ նմանութեանն նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացոց ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքոյ» (էջ 113): Այսպես նաև մյուսները: Մարդկային բառը կիրառել է նաև Իսուղանդը. «Յաճախեաց զերևույթ նշանս իւր ու զսքանչելիս, մինչև զմարդկային բնութիւնս արժեաց ի կերպարանս անասնոյ» (Փ, 13): Մարդկային բառը գործածված է նաև Ոսկեբերանի, Եփրեմի, Մեսրոպյան մի քանի թարգմանությունների մեջ: Նույնպես երկնային, խաւարային, անդնդային, առանձնային, գիշերային, աստուածային բառերը. օրինակ՝ «Եւ խաւարային ջուրք մինչև յամպս օդոց» (Սղմ. Ժէ, 12), «Զի մենք կորուսեալ էաք ի տգիտութեան մերում և ի խաւարային ճանապարհս» (Ազաթանգեղոս, 243): «Իսկ ապա աստուածակիր իմաստութեամբ խելամտեալ, ճանաչել ըստ իւրաքանչիւր, ըստ առանձնային կերպարանաց զանունն նշմարեցուցանել» (Ազաթանգեղոս, 264): Ըստ Նորայր Իսուղանդացու ավելի հաճախ է աստուածային բառը բոլոր գրքերում. աստուածային խորհուրդ, աստուածային առաքեալ, աստուածային արդարութիւն, աստուածային օրէնք, աստուածային բանք, աստուածային գիրք, աստուածային գանձք (Ազաթանգեղոս)... ծնունդ... խորհուրդ և այլն¹²:

Եթե -ային ածանցով այսքան հարուստ կազմություններ կան մեսրոպյան հայերենում, որ ըստ սահմանումի չպետք է լինեին, ապա ինչո՞ւ հետմեջ-յուրյան հեղինակները չպետք է կիրառեին, մանավանդ թե -ային հայերեն ածանցը, ինչպես ցույց են տալիս փաստերը, ածական կաղմող ածանցներից է և շատ հին է ու առ այսօր կենդանի մի ածանց է: Այս կետում էլ մեսրոպյան և հետմեսրոպյան հայերենի տարբերություն սահմանողները հետեւել են նախապես սահմանված զոգմային:

Այժմ դառնանք V դարի մեր երեք հեղինակների այդ ածանցի կիրառություններին. Փարպեցին այդ ածանցով երեք բառ է գործածել. ձմեռային, մարդկային, ցամաքային: Եղիշեն ունի՝ զարնանային, դաշտային, ծովային, ցամաքային, որոնցից միայն ծամանակ արտահայտող բառ է զարնանային. մնացածը տեղ արտահայտող բառեր են, որոնք մեսրոպյան հայերենին են հատուկ: Շատ չի գործածել նաև Խորենացին. ամառնային, աստուածային, զարնանային, գիշերային, ձմեռային. մարդկային, որոնային, պարսկային, ջերմային, սառնակային և մի երկու ուրիշներ: Իսկ -ական ածանցով կաղմբված բառերը համեմատաբար շատ են, ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ Փարպեցու, Եղիշեի, Խորենացու երկերում:

¹¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 88:

¹² Տե՛ս ն. Բյուղանդացի, նշվ. աշխ., էջ 218:

Չ-րդ կետում ասված է, թե –ան ժխտական ածանցով կազմված բառերը –ելի վերջածանցը չեն ընդունում. ոչ թե անշարժելի, այլ անշարժ, անալալ, անխախտ և այլն:

Ամենամեսրոպյան համարված Եղնիկն ունի անբժշկելի. «Մեծ հերձուած և անբժշկելի շարիք է այնպիսի առաջնորդութիւնն» (էջ 312): Աստվածաշնչում կա անփոփոխելի. Բուղանդն ունի անջնջելի: Նույնպես խիստ մեսրոպյան Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքում» կարդում ենք. «Ըստ անագղելի և անսահմանելի մեծութեանն Աստուածոյ: Արտաքոյ անյագ սահմանին հանէ զմեզ յանաստելի անդունդս արշաւանաց իւրոց»: Ոսկեբերանն ունի անալաւսելի, անփափագելի, Ադաթանգեղոսն ունի անբմբհելի, անկշռելութիւն և այլն: Այդ շրջանը ուսումնասիրողները ուշադրութիւն չեն դարձրել երկու հանգամանքի վրա: Մեկ որ՝ անհատ և անհատաւորի նշանակութեամբ բոլորովին զանազանվում են. անհատ նշանակում է չհավատացող, կամ հավատ չունեցող. իսկ անհատաւորի ունի չհավատալու, այնպիսի, որ հավատ չի ներշնչում, իմաստ. այդպես էլ անագատ և անագատելի զանազանվում են իմաստով: Եվ երկրորդ՝ հաճախ ան-ի հետ առանց –ելի ածանցի (–ալի, –ելի) բարդութիւն չի ստացվում. օրինակ՝ անգողանալի, անասելի, անհնաւալի և այլ կադմութիւններ առանց վերջին ածանցի անիմաստ կլինեն:

Ինչ վերաբերում է այդպիսի կադմութիւններին հետագայում, ասլապես է նշենք, որ արդարև, դրանք V դարից հետո անհամեմատ բազմանում են. նարեկացին հարյուրավոր այդ տիպի բարդութիւններ ունի: V դարի երեք ոչ մեսրոպյան հեղինակներից այդպիսի բարդութիւններ հաճախ է կիրառում Խորենացին. անակնունելի, անբաղձալի, անդառնալի, անբմբհելի, անխզելի, անխոնարհելի, անկարելի, անհասանելի, անհատաւորի, անմատչելի, անլիշտակելի, անլիշելի, անպարտելի, անտանելի, անբթելի. ընդամենը 16 անգամ: Մի քիչ ավելի պակաս է գործածել Եղիշեն. անգատելի, անբաժանելի, անբմբհելի, անբողի, անլիմելի, անլուծանելի, անկասկածելի, անհատաւորի, անմեծելի (ծանոթագր. անմեծ), անմեծանալի, անլիշանելի, անտեսանելի: Իսկ Փարպեցին ունի ընդամենը 4 բառ. անալականելի, անկարծելի, անհատաւորի, անմեղադրելի:

Դիտողութեան կարգով նշենք, որ այդ կարգի կադմութիւնները սկզբնապես սակավ են, բայց այնուամենայնիվ կան, և դրանց հետևողութեամբ հետագա գրողները բազմացրել են դրանք: Իսկ որևէ հին գրվածքի մեջ դրանց առկայութիւնը հաճախ սխալ ախտորոշման է մղում այն մարդկանց, որոնք համոզում ունեն, թե մեսրոպյան հայերենում այդ կարգի կադմութիւններ բնավ չկան: Այսպես՝ «Յաճախապատում ճառք» կոչված ժողովածուն, որ գրված է Եզնիկի լեզվով և որ Եզնիկը այդ գրքից օգտվել է անպայման, որովհետև բովանդակութեան ու լեզվաոճական կապը բացահայտ է, չի համարվում մեսրոպյան շրջանի լեզվով գրված, քանի որ մի քանի անգամ այնտեղ կիրառված են անմեղկելի, անսասանելի և նման ուրիշ բառեր, մինչդեռ ավանդութիւնը և հին գրավոր հիշատակութիւնները այդ ճառերը վերագրում են Մեսրոպ Մաշտոցին, մինչև իսկ Մխիթարյանները հրատարակել են լուսավորչի անունով¹³:

¹³ «Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճառք և աղօթք», Վենետիկ, 1838:

13-րդ կետում ասված է, թե խառնել բայն ունի երկու նշանակություն՝ միավորել և խառնակել. առաջին նշանակությամբ խառն բառը կիրառվում է բարդության վերջում, իսկ երկրորդ նշանակությամբ՝ բառասկզբում: Այս զանազանությունը միայն մեսրոպյան հայերենին է հատուկ, հետմեսրոպյանը այս նրբությունը չի զանազանում:

«Նոր Հայկազյան բառարանում» խառն-ում սկսվող բառերը չեն զանազանում մեսրոպյան և ոչ մեսրոպյան հայերենը, որովհետև հին և նոր հեղինակներն այդ բառերը միշտ զուգընթաց միանման են կիրառում, եթե բառն անարգական նշանակություն ունի V դարի առաջին կեսում, այդ նշանակությունը չի փոխվում հետագայում: Եզնիկն ունի խառնակութիւն, խառնաբեղութիւն, խառնել, խառն ի խառն, խառնիչ, խառնուած, խառնութիւն, խառնփ: Առաջին երկու բառերը մեր լեզվում ի սկզբանե անտի ունեն անարգական նշանակություն. այդպես է նաև. խառն ի խառն: Խառնել, խառնուած, խառնութիւն սովորական են: «Արեգակն թէ բարի էր առանց օդոյ խառնուածոյ այլիչ...» (Եղնիկ, 10): Խառնութիւն բառը, որ իմ մեջ բացասական տպավորություն է առաջացնում, եզնիկը կիրառել է սովորական նշանակությամբ. «Ձոր բարին կարծեցին, միայն առանձինն, առանց ընկերին խառնութեան վնասակար լինի (նույն տեղում): Ավելին, կարելի է ասել, այդ բառի ուշ կիրառությունն ընդհակառակն անարգական է. «Մարմին մեղսամակարդ, խառնութիւն ներհակական» (Նարեկացի):

Խառն բառով կազմված բաղադրությունները ոչ մի զանազանություն չեն տալիս. ինչ իմաստ որ բառերն ունեցել են մեսրոպյան շրջանում, նույն իմաստը պահպանվել է նաև հետագայում: Ուշ շրջանում կազմված մի բառ ենք գտնում, որ պետք է անարգական նշանակություն ունենար, բայց չունի: Համեմատիր խառնակեաց, որ նշանակում է ոչ միայնակեաց:

Փարպեցին խառն բառով բարդություն բառասկզբում անգամ չունի. միայն խառնուրդ բառն է: Խորենացին էլ ունի խառնակութիւն, խառնաղանձ, խառնակել:

Եղիշեն գործածել է խառնակութիւն, խառնամուխ, խառնափնթոք, խառն ի խառն, խառնուած, որոնք բոլորն էլ իմաստով զուգընթաց են մեսրոպյան շրջանի նույն բառերի հետ:

Փարպեցին գործածել է բաբխառնութիւն (օդոցն բաբխառնութիւն), ազգախառն և ազգախառնութիւն բառերը, որոնք ունեն դրական նշանակություն (աղգակից, աղգակցություն): Խորենացին ունի բաբխառն, բաբխառնութիւն, Եղիշեն կաղմել է ջերմախառն («ընդ քիթն և ընդ բերանն առհասարակ գոլորշի ջերմախառն ելանէր»): Խառն բառով բաղադրությունները երկու հայերենները տարբերակող հատկանիշից բացարձակորեն զուրկ են:

14-րդ կետը նույնպես շատ թույլ կովան է: Իբր թե մեսրոպյան հայերենը սառնամանիք բառը կիրառում է սառնամանիք ձևով, իսկ հետմեսրոպյանը՝ սառնամանիք: Մի բառի վրա հիմնված այդպիսի սահմանումը չի կարող անջրպետ դառնալ լեզվական շրջանաբաժանման համար: Իսկապես, Եզնիկը սառնամանիք ձևը (ոչ թե սառնամանիք) վեց անգամ կիրառել է և ոչ մի տեղում բաղադրության մեջ –ն-ն չի մտած:

Բայց եթե հարցը սառ և սառն ձևերին է վերաբերում իբրև բարդության բաղադրիչներ, ապա պետք է նկատի առնվի ոչ միայն սառնամանիք բառը, այլ այդ երկու բաղադրաձևերով կազմված բոլոր բառերը: Ազգաթանգեղոսը

կազմել է սառնահալ և ոչ թե սառահալ («Երասխ յարուցեալ զայլ լի դարիւ և դարիւ, սառնահալ...» (էջ 33): Մեսրոպյան շրջանին են պատկանում սառնակերպ, սառնապատ, սառնատեսակ («Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ սառնատեսակ» (Յայտն., Իբ, 1), սստնեղեն (Ազաթանգեղոս): Դառնալով սառնամանի ձևին, նշենք, որ Ազաթանգեղոսն ունի սառնամանիք («զաւուրս ցրտաշունչ, հողմաշունչ սառնամանեացն անցուցանէին»): Խորենացու բաղդատական բնագրում նշված է սառնամանիք, բայց մի քանի ձեռագրեր ունեն սառնամանիք (տե՛ս էջ 34, տող 7): Ինչպես երևում է, սառնամանիք հին ձև է, բայց այս միակ բառը չի կարող խտրոց դառնալ լեզվական փոփոխի համար: Այլ բան կլինէր, եթե վերցվեր նման բառերի մի խումբ. օրինակ, ասենք՝ ձևն. ոտն, դառն և նման բառեր, որ բաղադրության մեջ մտնեին ձեռ, ոտ, դառ ձևերով: Օրինակ՝ Ազաթանգեղոսն ունի ձեռատունկ և ձեռասունք ձևերը, իսկ Թուզանդը ձեռասուն բառը երկու անգամ է գործածել, մեկ անգամ ձեռնասուն, երկրորդ անգամ ձեռասուն: «Ձեռնասուն էր (Խաղ) սա եպիսկոպոսապետին Ներսէսի» (Դ, 12, էջ 108): «Առնույր սուրբն գինդ և զՄուշէ մանուկ ձեռասուն» (Ե, 16, էջ 28): Կորյունը նույնպես երկու անգամ է կիրառել, երկուսն էլ ձեռնասուն ձևով («Ձեռնասուն պաշտօնեայք, ձեռնասուն աշակերտք», էջ 82—92): Ձեռասուն ձևը գործածված է Ոսկեբերանի՝ Եսայու մեկնության մեջ (զՁեռասուն և բնտանի անասունս և զմշակս):

Եղիշեն երկու անգամ ունի ձեռնասուն, բայց ձեռագրերը տալիս են նաեւ ձեռասուն, ձեռասունք, ձեռասուն (երկու տեղում էլ ձեռագրերը տալիս են ձեռասուն բնթերցվածք, որ, ըստ երևույթին, ճիշտն է, որովհետև ձեռասունը կարող էր դառնալ ձեռնասուն և ոչ թե հակառակը):

Նշված է նաև, թե մեսրոպյան հայերենում սառնամանիք նշանակում է ցուրտ քամի («Կամ օդը երբեմն զսառամսնիսն շնչելով, երբեմն զխորշակն բերելով»), իսկ հետմեսրոպյանում՝ սառույց (Բագում ձմերաց հալեցան սառնամանիք (Եղիշեն): Եզնիկը սառնամանիք բառը կիրառել է 6 անգամ: Վերևում բերված օրինակի մեջ սառնամանիքը սառը քամի է նշանակում. հաջորդ օրինակում բառս նշանակում է ոչ թե քամի, այլ ցրտություն, սառնություն: «Երկու հակառակ իրերաց՝ միմեանց ծախիչք են, որպէս... ջեր սառամանեաց» (Եզնիկ, 64): Իսկ հետևյալ օրինակում սառնամանիք նշանակում է սառույց: «Եթէ ոչ ձիւն և սառնամանիք պնդէին զլերինս արմատք խոտոց ոչ պարարէին» (էջ 70): Այդ երեք նշանակությունները ուղեկցում են այս բառին ամբողջ գրաբարի շրջանում: Համեմատիր. «Շնչումն սառնամանեաց» (=սառը քամի, Շիրակացի): «Հողմը դառնաշունչ, ջուրքն սառնամանիք և սորա ի մերկութեանն» (XI—XII դար): Սառնամանիք բառը սառույց նշանակությամբ կիրառված է նաև «Յաճախապատումի» մեջ, որ համարվում է հետմեսրոպյան (նկատի ունեցիր ձևը՝ սառնամանիք): «Որ հրով և ցրտով ջրով և սառնամանեօք» (Ճառ 16, էջ 158):

15-րդ սահմանումը պնդում է, թե մեսրոպյան հայերենը բայր վերլուծական ձևով է գործածում. փոխանակ ասելու պատասխանել, ասում է պատասխանի առնել, աղօթս առնել (ոչ աղօթել):

Բերվում են նաև՝ հետևել, երկրպագել, ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել, որոնք չկան մեսրոպյան հայերենում:

Եղիշեն ոչ միայն աղօթել բայը չունի, այլ աղօթք չի գործածել, բայց սրա դիմաց կիրառված են՝ արարէլ պատասխանի, արարին պատասխանի, տա-

լին պատասխանի, ետ պատասխանի (22 անգամ), ետուն պատասխանի (5 անգամ): տալ պատասխանի, որոնք համարվում են մեսրոպյան: Ուրախանալ, երկրպագել և ուրախացուցանել բայերը նույնպես չկան, միայն մեկ անգամ կիրառված կա ուրախ առնել և մի շարք անգամ՝ երկիր պագանել, չկա նաև հետևիմ բայը: միայն մեկ անգամ կիրառված է ողջունիմ:

Փարպեցին բազմաթիվ անգամ կիրառել է պատասխանի առնել, պատասխանի տալ, և ոչ մի անգամ չունի պատասխանել, բայց գործածել է ողջունել (մի շարք անգամ), աղօթել, ուրախանալ, երկրպագել և մեկ անգամ էլ հետևիւր: Բայց այս բայերի հետ կան նաև կիրառված ուրախ առնել, ուրախ լինել, զհետ երբալ, երկիր պագանել: Խորենացին ունի պատասխանել (2 անգամ), բայց բազմաթիվ անգամ պատասխանի առնել, ողջունել (1 անգամ), հետևել (3 անգամ), բայց զհետ ընթանալ, զհետ կրթել, զհետ լինել, զհետ մտանել և այլն՝ շատ անգամ, կան նաև մյուսները մեկ-երկու անգամ կիրառված: Արիստակես Վարդանյանի վկայությամբ աղօթել բայը կիրառված է մեսրոպյան համարված Պիովնի «Յիշատակաց սրբոց հաւասարել» վկայաբանության մեջ: «Առ աստուած աղաւթել ուսայ» (էջ 39)¹⁴:

Նորայր Բյուղանդացու վկայությամբ Ոսկեբերանի «Մեկնութիւնք թղթոյն Պաւղոսի առ Հռովմայեցիս» հատվածում աղաւթել բայը կա 5 անգամ, կա նաև նույն Ոսկեբերանի՝ երրայեցիների թղթի, Եփրեմի մեկնությունների մեջ, չլարքաբանական գրքերում¹⁵:

Ազաթանգեղոսը երկրպագել բայը կիրառել է երեք անգամ երկրպագեալ ձևով («աստուծոյ երկրպագեալ», «որում երկրպագեալ», «զերկրպագեալն», էջ 200, 400, 407):

Որքան էլ այս վկայությունները պնդեն, թե այդ կիրառությունները անվավեր են, կասենք, որ այդ պնդումները հարմարեցվում են նախնական սահմանումին և ոչ թե իրական տվյալին: Բազմաթիվ անգամ կիրառված աղօթմաները չեն կարող ամբողջովին սխալ լինել, մանավանդ այդ բայի տեղը աղօթս առնեմ, յաղօթս կամ և նման դարձվածքներ իբրև սրբադրություն տեղադրել չի լինի:

Հետևիմ բայի վկայությունը բերված է նույն Արիստակես Վարդանյանի կողմից¹⁶:

Կա մինչև իսկ հակառակ երևույթը. մեսրոպյան շրջանի հեղինակները կիրառում են բայ, իսկ հետմեսրոպյան հեղինակները՝ հարադրություն. օրինակ՝ «Իբրև զեզ և իբրև զշորի՝ այնպէս ըստանձնեալ բեռինս պահեցեր» (Ազաթանգեղոս, 39): «Արդ առեալ սկայագօրն հայկաբար զուրթ արձանսն... ըստանձնեալ բերէր ի վկայարանս տաճարացն» (Ազաթանգեղոս, 398): «Ապա կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր և տասն տասն իւրասախ բերէր ըստ անձին զայնչաւի այրն զանհեղեղ զանարի» (Բուղանդ, Ե, Լէ, 246): Իսկ Փարպեցին. «Եւ ի նմին ժամու բարձեալ զմէնջ զմի մի ըստ անձին տաւ հեռի ի տեղեացն» (էջ 141):

Եղնիկը աշխատել բայը կիրառել է 10 անգամ, իսկ աշխատ առնել՝ 3 անգամ, անուանել՝ 20 անգամ, իսկ անուանս դնել՝ 6 անգամ, պաշտել՝ 13 ան-

¹⁴ Ա. Վարդանյան, Նյութեր հայերեն բառագրության, Վիեննա, 1920, էջ 45:

¹⁵ Ն. Բյուղանդացի, նշվ. աշխ., էջ 23:

¹⁶ Տե՛ս Ա. Վարդանյան, Բառաբանական դիմողություններ, Վիեննա, 1913, էջ 79:

գամ, պաշտօն տանել՝ 1 անգամ, պաշտօն մատուցանել՝ 9 անգամ, պաշտօն հարկանել՝ 1 անգամ:

Փարպեցին աշխատեմ, աշխատիմ բայը կիրառել է 2-ական անգամ, իսկ աշխատ առնել, աշխատ լինել, աշխատ ունել՝ ութ անգամ: Չենք ուզում օրինակների թիվը ավելացնել. թե մի օր կազմվեն մեսրոպյան շրջանի գրական լեզվի համաբարբառները, այն ժամանակ պարզ կդառնա, որ շրջաբաբաժանման ու տարբերակման նշածողերը երիտասարդական ոգևորության արդյունք են եղել, և որ իրական փաստերը գերադանցորեն ջնջում են այդպիսի խտրող միջոցները և այս կամ այն բառի կիրառությունը տվյալ դեպքում հաճախ անհատական նախասիրության արդյունք է, քան ժամանակի:

Ինչ վերաբերում է ժամանակի հարցին, ապա մի տարի առաջ կարող են այսինչ բառերն ու արտահայտությունները չլինել, և մյուս տարին լինել, որ արդյունք է կամ նախասիրության և կամ նորակազմության: Նորայր Բյուզանդացին Կորյունից ու Ազաթանգեղոսից փառաբանիչ բառի համար օրինակներ բերելով՝ ավելացնում է, թե «Փառաբանիչ հանդիպած չեմ ի գիրս մյուս դասուց»¹⁷, այսինքն՝ մեսրոպյան շրջանի մյուս գրքերում: Նույն ուսումնասիրողը հարյուրավոր օրինակներ է բերում, որ ունեն Ազաթանգեղոսը, Բուզանդը, Կորյունը, իսկ մեսրոպյան շրջանի ոչ մի հեղինակ չունի: «Աստվածատուր իմաստություն» հանդիպած չեմ ի գիրս միւս դասուց»: «Ոչ միայն յուսալից փութով ու նմանք չկան ի գիրս մյուս դասուց, այլև ոչ յուսալից բառն»: «Հելլենական և Հելլեն իբր ածական բառք անծանոթ են մյուս դասուց, որ կրսեն յունական, յուն, յունարէն»: «Ի գիրս մյուս դասուց հանդիպած չեմ սատարութիւն»: «Մյուս դասուց անծանոթ է որոյ անուն հանաչեր»: «Աստուածակարգ բառն այլուր չգտնվիր»: «Ասպատակ սփռեմ՝ առնեմ՝ կապեմ, դնեմ՝ տամ անծանոթ են մյուս դասուց» և այլն և այլն¹⁸:

12-րդ կեսում ասված է, թե մեսրոպյան հայերենի սիրելի ձևերից է նույն բառով կազմված բարդություններ գործածել, օրինակ՝ Զօրացուցանէ զանգօրս մեծագօր գօրութեամբ» (Եղնիկ), «Մեծապատիւ, մեծապարզ և մեծաբեաց զնա» (Բուզանդ):

Այս կեսում բերվածը ևս շատ թույլ կովան է և մերժելի. ահա նման օրինակներ հետմեսրոպյան հայերենից... «Հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալս պարարտարոյս և պարարտաւոտ, պարարտահամբ» (Փարպեցի, 9): «Հարբ րարեսէրբ և բարեգութբ և բարեխորհբ լիցին՝ նմանեալք հօրն երկնատրի» («Յաճախապատում», 218): «Բարացուցական լամբոան բառացի բարաւնութեանց (Նարեկացի): Ընդ ծագս տիեզերաց և ընդ ծիրս եզերաց ի ծոցս ջուրց բազմութեան ծովուց (Նարեկացի):

Մեսրոպյան հայերենի հատկություններից մեկն էլ այն է, թե ընտիր չեն տրել և տրութիւն բաղադրիչներով կազմությունները, իսկ Աճառյանը պլինդում է, թե դրանք չեն ընդունվում¹⁹:

Կորյունը, Բուզանդը, Եվթաղը, Ոսկեբերանը գործածել են քաղցրատուր («Նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի», Կորյուն, 36), աստուածատուր («Միջամութս եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամա-

¹⁷ Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 106:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 96, 99, 61, 47, 108, 185:

¹⁹ Տե՛ս Ա. Վարդանյան, Բառարանական դիտողություններ, էջ 108 և Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 88:

նով» (Կորյուն, 50, 54, 56, 76), տերունատուր (տէրունատուր կերակուր), բարիատուր («Եւ ցուցանէ զբարիատուր զերախտապարզէ հատուցմանս», Բուդանդ, Դ, դ. էջ 96), առատատուր, առանձնատուր, դիատուր, հայրենատուր (հայրերից տրված) և այլն: Եթե այսքան կազմութիւն կա տուր արմատով, տրամաբանորեն արդարանում են –տրեմ և –տրությամբ կազմութիւնները, և իրոք, այս վերջին բաղադրիչներով կազմութիւնները շատ են, բայց որովհետեւ Գաթրըճյանը մի ժամանակ ասել է, թե այդ կազմությամբ բառեր չկան, հետագա ուսումնասիրողները ձգտել են արհեստականորեն ջնջել դրանք: Եվ ջնջում են փառատրութիւն որ փառատրութիւն-ից իմաստով զանազանվում է. համեմատիր Եզնիկի հետեւյալ կիրառութիւնները. «Դաւիթ զերեւելի արարածս ի փառատրութիւն արարչին կոչէ, թէ յայլմէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա հոգին ի փառատրութիւն» (էջ 195): Փառատրութիւն-ը ինչպե՞ս կարելի է փառատրութեամբ փոխարինել, երբ Եզնիկը փառք տալու մասին է խոսում և այդ նույն բայը հինգ անգամ գործածում է: Գործածել են Ագաթանգեղոսը (տարբերակներում, էջ 79), Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեանը», Կորյունը. ըստ Վարդանյանի կան պատասխանատրութիւն, հրամանատրութիւն, վաճառութիւն, վաճառեմ և այլն²⁰:

Մի այլ կետով ասված է, թե –ան ժխտական մասնիկի փոխարեն հաճախ մեսրոպյան հայերենը կիրառում է առանց նախադրութիւնը, ինչպես առանց հասանելոյ (անհաս), առանց գիտության (անգետ) և այլն:

Ոչ մեսրոպյան հեղինակ խորենացին գրում է. «Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել և հովիւք առանց բարիոք վերակացուի» (Գ. ԽԲ, 311): Առանց հովուաց նշանակում է անհովիվ, առանց վերակացուի–անվերակացու: Փարպեցին գրում է. «Յանկամ մեռանել, քան թե կալ ուրախութեամբ առանց Աստուածոյ» (առանց Աստուածոյ||անաստուած): «Խօսել ընդ զօրավարին Հայոց Վարդանայ զայս ամենայն առանց յապաղելոյ» (առանց յապաղելոյ-անյապաղ. էջ 49, 52): Զենք ուզում օրինակները ավելացնել, դրանք բազմաթիվ են և հերքում են երկու շրջանի բաժանման փաստարկների նաև այդ կետը:

Վերջին՝ 18-րդ կետում ասված է, թե քաղաքների ու երկրների անունները մեսրոպյան հայերենում կազմվում են հատկացուցիչով (աշխարհ Հայոց, քաղաք Հռովմայեցոց): Եվ ապա իբրև ամենից ուժեղ փաստ ծանոթագրության մեջ ասված է. «Թեև կարելի է ասել Պարսկաստան, Հրէաստան... բայց երբեք չի կարելի ասել Հայաստան»²¹:

Փարպեցին երկրների անուններից միայն Ասորեստան և Բաբելոն է գործածել այս ձևով, որ չի հակասում մեսրոպյան հայերենի պահանջներին: Մնացած բոլոր անունները այն ձևով են, ինչ որ պահանջում է մեսրոպյան հայերենի սահմանումը: Ապար աշխարհ, Արեաց աշխարհ, Երկիր Աղուանից, Հայաստան աշխարհ, Հռովմայեցոց Բաղա, Յունաց աշխարհ և այլն: Իսկ Հայաստան բառը մի անգամ է առանձին գործածել, այն էլ երկիր չի նշանակում. «Քանզի պաշտօն եկեղեցոյ և կարդացմունք գրոց ասորի ումամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց» (էջ 13):

²⁰ Տե՛ս Ա. Վարդանյան, Բառաքնական դիտողութիւններ, էջ 108—109: Իսկ նորայր Բյուզանդացին բերում է մի քանի տասնյակ կիրառութիւններ. տե՛ս նրա «Կորին վարդապետ և թարգմանութիւնք նորին», էջ 301:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ մաս, էջ 89:

Եղիշեն –սաւան-ով միայն երկու բառ ունի՝ Ասորեստան, Տաճկաստան. մնացած նման անուններն են՝ Երկիր Բաբելացւոց՝ Իտաղական՝ Խաղտեաց Շայոց՝ Յունաց՝ Պարսից՝ Քուշանաց։ Աշխարհ Աղձնեաց՝ Աղուանից՝ Արեաց՝ Լփնաց՝ Խաղտեաց՝ Խալլանդրաց՝ Շայոց՝ Հոնաց՝ Հոռոմաց՝ Յունաց՝ Պարսից, Սինեաց և այլն։ Իսկ Հայաստան բառը ոչ մի անգամ չի կիրառված։ Խորենացին Հայաստան բառը (իսկ «Թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանոք իջեալ ի դաշտն Գարգարացւոց», էջ 230) մի անգամ է կիրառել, որ թարգմանված է Հայաստանի գործերով. սա պետք է փոքրատառ գրվեր և թարգմանվեր հայերով։ Ուրեմն Հայաստան այստեղ էլ երկիր չի նշանակում։

Մնաց քննելու մի շատ բարդ հարց՝ հունաբան հայերենի նախորդավոր կազմութիւնները։ Այս կետը ձևակերպված է այսպես. ապա, առ, բաղ, բաց, գեր, դեր, ենթ. հոմ, մակ, յար, ներ, շաղ, շար, վայր, վեր, տար, տրամ, ստոր, փաղ մասնիկներով սկսվող բառեր չեն գտնվում. մեսրոպյան հայերենի մեջ։

Արիստակես Վարդանյանը այս կետի համար ոչ թե ընդհանրապես բառեր է ասում, այլ բայեր, ու մեսրոպյան հայերենից բերելով այդպիսի մի շարք բայերի վկայութիւններ՝ ջանում է դրանք սրբագրել. նրա բերած բայերն են՝ վերածեմ, առգանցանեմ, առլցեալք, դերազանցեմ, ներգործեմ։ Հայկազյան բառարանը Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի» գրքից բերում է ապագովեմ («Յորժամ զգեղեցիկ ինչ և յայծառ գովիցէ դյոռին և զանպիտանն ապագովէ»)։ այստեղ ապագովել բայի կիրառութիւնը այնպիսի զորեղ հակադրությամբ է գործածված, որ ոչ մի սրբագրության չի կարող ենթարկվել։ Ապալեպ բառը Աճառյանը մեկնում է իբրև անափ և իսկապես ապա-ն այստեղ ան բացասական մասնիկի նշանակութիւնն ունի, բառս գործածված է մեսրոպյան «Վեցօրեայքում» («Ծով մեծանիստ, ապալեպ լեպ, անխորշ, անգոգ է...»)։ Աստվածաշնչում գործածվում են ապախուրել. Զգլուխս ձեր մի ապախուրէք. զգլուխ իւր մի ապախուրեսցէ-խույրը հանել, անխույր դարձնել (Ղուկ. Ժ, 6, ԻԱ 10)։ կիրառված են նաև ապաշնորհ, ապահարկ, ապերասանութիւն։ Առ մասնիկով ունենք այնպիսի դասական բառեր, ինչպես առագաստ, առածիմ։ («Երկինքն զմի տիւ և գիշեր առածեալ զինքեամբ՝ շրջին ի նոյն տեղի», Եզնիկ)։ Եւ ամենեքեան յետս առածեալ հարան զգետնի (Ոսկեբերան, Մեկն. Եսայեայ), առաւելիմ, առաւելիութիւն, առաւելում, առեղծանեմ, առեղծում, առննթանամ, առլնում, առկայծեմ, առողջանամ, բացածի, գերահրաշ, գերաւօստալից, յարակարգել, յարամուր, ներգործեմ, ներգործութիւն, պարունակեմ, տարբեր, տարբերութիւն, տարածամ, տարածամել, տարածամու, տարապայման և այլն։

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ մասնիկներով քիչ բառեր կան մեսրոպյան հայերենում և մի քանի մասնիկներով բնավ չկան (փաղ, բաղ, տրամ և այլն)։ Իսկ որքա՞ն այդ կարգի բառեր ունեն V դարի մեր երեք նշանավոր պատմագիրները, որոնք օտարված են V դարի գրականության հիմնական մասից։

Փարպեցին չունի ապա, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հոմ, մակ, յար, ներ, պար, ստոր, վայր, փաղ մասնիկներով ոչ մեկ բառ։ Ունի շարագիր, շարագրեալ, առլցեալ, վերաբերեմ, վերաբերեալ, փաստորեն միայն երեք մասնիկ և 4 բառ է գործածել, նշենք որ առլնում մեսրոպյան է։

Նդիշեն շունի՝ առ, բաղ, գեր, դեր, ենթ, հոմ, մակ, յար, ներ, շաղ, պար, վեր, ստոր, վաւ, վաղ մասնիկներով ոչ մեկ բառ, մեկական բառ ունի աւա-ով (ապարանութիւն), տար-ով (տարաբաժին) և բաց-ով (բացատրեմ):

Խորենացին այստեղ զանազանվում է իր ժամանակակից երկու ճեղի-նականերից: Գործածել է բաղդատել (1 անգամ), գերազանցել (1 անգամ), գե-րազանցօրեն (1 անգամ), գերապայծառ (1 անգամ), գերապանծ (1 անգամ), մակագրութիւն (1 անգամ), շարադասել, շարագիր, շարագրել, շարագրու-թիւն, շարադրութիւն, պարականոն (1 անգամ), պարածածկել, պարսլածեալ (1 անգամ), վերագրել, վերաբերել, վերաբերութիւն, վերածնութիւն, ստորա-գիր, ստորագրութիւն (յուրաքանչյուր 1 անգամ), կա նաև հոմանուն և հո-միշխան, որոնք ունեն համանուն և համիշխան փոփոխակաները (ըստ ձե-ռագրերի) ու երկու անգամ էլ՝ համանուն բառը («Թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր Արտաշէս... ի վերայ պարսից աշխարհին», էջ 182):

Իրականում այս է մեսրոպյան և հետմեսրոպյան հայերենը տարբերա-կող միջոցների պատկերը, որ Վիեննայի Մխիթարյանները և նրանց հետևող-ները համարել են խստագույն տարբերակիչ միջոցներ և, համաձայն նախօ-րոք տրված սահմանումների, ձգտել են մեսրոպյան հայերենից դուրս նետել այն բոլոր ձևերը, որոնք ըստ նախապես առաջարկված պայմանի չպետք է լինեին մեսրոպյան շրջանի հայերենում: Սակայն նույն շրջանաբաժանման կողմնակիցները ոչ մի անգամ չմտածեցին քննել V դարի երկրորդ կեսի դրա-կան լեզվի վիճակն ու պատկերը ըստ այդ տարբերակիչ միջոցների: Եվ հա-մաձայն նախօրոք տրված սահմանումների ձգտեցին մեսրոպյան հայերենից դուրս նետել այն բոլոր ձևերը, որոնք ըստ նախապես առաջարկված պայմա-նի չպետք է լինեին մեսրոպյան շրջանի հայերենում: Այն բառերն ու բառա-ձևերը, որոնց վրա մեսրոպյան շրջանի դրաբարի վերաբերմամբ արգելք դրու-վեց, համարվեցին սեփականութիւնը ուշ շրջանի: Մինչդեռ, ինչպես տես-նում ենք, վիճակը այլ է: Հետմեսրոպյան շրջանի մեր երեք հռչակավոր պատ-մագիրները շարունակում են մեսրոպյան շրջանի լեզվական ավանդները, որոնց զուգընթաց են «Յաճախապատում ճառքը», Կալիսթենեսի՝ «Պատմու-թիւն Աղեքսանդրին», Գրիգոր Ատավածաբանից կատարված թարգմանու-թիւնները և այլն:

Լեզվի պատմութեան ժամանակակից տեսութիւնը լեզվաբան շրջա-նաբաժանման սկզբունքներ է առաջադրում՝ լեզվի կառուցվածքի փոփոխու-թիւն, լեզվի հասարակական դերի կամ գործառնության փոփոխութիւն և լեզվի պատմության ու ժողովրդի պատմության պատմաշրջանների համա-պատասխանութիւն:

Այս սկզբունքները հիմնականում ձիշտ են արտացոլում լեզվի պատմու-թյան շրջանաբաժանման հիմունքները: Եթե այս տեսակետով դատելու լի-նենք, ապա V դարի մեր լեզվի շրջանաբաժանման ընդունված դրութիւնը պետք է վերանայվի, մանավանդ՝ որ այդպիսի շրջանաբաժանման համար առաջ քաշված փաստարկումները քննութիւն չեն բռնում:

Ավելին կարելի է ասել. ակադեմիկոս Վլադ Գեորգիևը գտնում է, որ լեզվի հիմնական շրջանաբաժանման սահմանները պետք է ընդգրկեն ոչ պակաս, քան 3—4 դար, երբ լեզվի մեջ առաջացել են խիստ բնութագրական ու նույնքան խիստ էական փոփոխութիւններ: Իսկ ինչ վերաբերում է են-թաշրջանաբաժանման, ապա սրա համար նա ընդունում է 1—2 դար: Շրջա-

նաբաժանման համար կարևոր են ավելի ձևաբանական փոփոխությունները, քան հնչյունաբանական, բառակազմական և շարահյուսական, իսկ այս վերջինները գերադասելի են բառապաշարային փոփոխություններից, եթե բառերը չեն պատկանում հիմնական բառաֆոնդին²²։

Պետք է նշել, որ Գեորգիևի սահմանումը չի կարելի իբրև դոգմա ընդունել։ Իհարկե, եթե ժողովրդի պատմության մեջ այնպիսի տեղաշարժեր են լինում, որ հիմնովին փոխում են նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային կենսապայմանները և ըստ այդմ լեզուն զարգացման նոր հուն է մտնում, ապա ենթաշրջանաբաժանման համար ավելի փոքր ժամանակ էլ կարելի է վերցնել։

V դարի մեր գրական լեզուն մեկ ամբողջական գրական լեզու է։ Այդ կարճ ժամանակի համար նման շրջանաբաժանումը իրական հիմք չունի, ուստի չի կարելի այն գիտական համարել։ Մի դարի լեզվական ողջ հարստության ուսումնասիրությունը ըստ լեզվաոճական քննության չպետք է հիմնվի ժամանակի գործոնի վրա։ Ուսումնասիրությունը անհրաժեշտորեն գրական երկերը բաժանելու է երկու հիմնական խմբի՝ ինքնուրույնի և թարգմանականի։ Ինքնուրույն երկերի լեզվի և ոճի քննության հիմքում դրվելու են անհատ հեղինակի լեզվաոճական նախասիրությունները՝ խրթնաբաժան է տվյալ հեղինակը, թե պարզախոս, որքանով է հետևում ժողովրդախոսակցական լեզվի ավանդներին, մայրենի կամ օտար ի՞նչ ազդեցություններ է կրում, բառապաշարային որպիսի՞ նորություններով է հանդես գալիս, ձևաբանության ու շարահյուսության մարզում որքանով է զանազանվում իր նախորդներից, գեղարվեստական խոսքի ինչպիսի հատկանիշներով է օժտված և այլն։ Այս բոլոր լեզվաոճական հատկանիշները չափակշռելով նախ ճանաչում ենք տվյալ հեղինակին իր անհատական ամբողջությամբ և ապա ընդհանրացնում ենք այս կամ այն ոճաբանական խմբի մեջ (խրթնաբանություն, պարզախոսություն, ընդհանրախոսություն)։

Թարգմանական երկերը նույնպես այս մեթոդով են ճննարկվում, բայց այնտեղ շեշտը դրվում է հայացի թարգմանության և օտարաբանության վրա և ապա զննատվում է ըստ ոճաբանական խմբավորման։

Այժմ տեսնենք, թե Վիեննայի Մխիթարյանների այդպիսի շրջանաբաժանումը ինչ օգուտներ ու վնասներ ունեցավ։ Օգուտը այն եղավ, որ Վիեննայի մխիթարյանները և սրանց հետևորդները սկսեցին եռանդագին պրպտումներ և մեջտեղ հանեցին բազմաթիվ ու բազմազան գրական հիշատակարաններ և ըստ իրենց շրջանաբաժանման չափանիշի ուսումնասիրեցին դրանք. մեծ հեղինակություն սեփականացրին V դարի առաջին կեսի դրական լեզվի համար, ուրվագծեցին ձևաբանական և մասամբ շարահյուսական այն ուղեծրերը, որ գործում էին դրերի գյուտի սկզբում։ Սակայն հենց դրանով ստվերի մեջ դրվեցին այնպիսի հեղինակներ, որպիսիք էին Խորենացին, Փարպեցին, Եղիշեն և հետագայի այլ խոշոր գրողներ։ Սրանք մեծ մասամբ շուտումնասիրվեցին ու սրանց ստեղծած ողջ լեզվական հարստությունը անուշադրության մատնվեց։ V դարի սկզբի մի շարք հիշատակարաններ՝ ունենալով այս կամ այն «խորթ», «ոչ դասական» բառը, հակառակ պատմական տվյալների ու ավանդության,

22 С. С. В. В. Виноградов, Проблемы литературных языков и закономерностей их образования и развития, М., 1967, էջ 34—35։

համարվեցին ուշ շրջանի և մնացին առկախ, կասկածելի ու քստ պատմական ճշտության և պատշաճի չգնահատվեցին: «Հետոսկեղարյան» գրական լեզուն հիմնովին հեղինակազրկվեց:

Մեր այս քննությունը համարում ենք նախնական և սպասում, երբ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնական դրադարանը ավարտի գրաբար ինքնուրույն և թարգմանական գրականության համաբարբառների հրատարակությունը գոնե V դարի սահմաններում:

КЛАССИЧЕСКИЙ И ПОСЛЕКЛАССИЧЕСКИЙ ГРАБАР

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

(Резюме)

В тридцатых годах прошлого столетия молодые члены армянской конгрегации Мхитаристов в Вене, изучая армянский язык V в., пришли к заключению, что язык первой половины этого века отличается стилистически, лексически и отчасти грамматически от языка второй половины. Филологи-арменисты, в том числе зарубежные арменоведы, в основном признали положения Мхитаристов и в своих исследованиях исходили из этих положений.

В нашей статье критикуются научные методы Мхитаристов и их взгляды. Отмечается, что они подражали ученым латинистам, которые при периодизации латинского языка исходили из истории римского народа и имели в виду сравнительно долгий период времени. Но 50 лет — слишком малый срок для периодизации истории языка. Отмеченные Мхитаристами отличительные черты не были общеязыковыми, они скорее присущи стилю отдельных писателей.